

Տեղեկատվություն
Ընդդեմ գենդերային բռնության 2012 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին

	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն			
1.	«Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ Կառավարություն:	<p>Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի կողմից լրամշակվել և ՀՀ Կառավարություն է ներկայացվել «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին», «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն ու լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:</p> <p>2012թ. հոկտեմբերի 22-ին «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ն կազմակերպել է կոնֆերանս, որտեղ քննարկվել է նաև «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:</p> <p>2012թ. նոյեմբերի 13-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ կազմակերպել է «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագծի հանրային լսումներ:</p> <p>Օրենքի նախագիծը տեղադրված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ինտերնետային կայքում՝ www.mss.am հասցեում:</p>	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
2.	Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի աշ-	Գենդերային բռնության դեմ ուղղված պետական ռազմավարության իրականացման ապահովմանն ուղղված աշխատանքների համակարգման, գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով հաշվետու	Ֆինանսավորում չի պահանջվել

<p>խատանքների մակարդում:</p>	<p>հա-</p> <p>ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010թ. մարտի 30-ի «Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու և անհատական կազմը հաստատելու մասին» N 213-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ պարոն Ֆ. Բերիկյանի նախագահությամբ անցկացրել է երկու նիստ, որի ընթացքում հանձնաժողովի անդամների կողմից ներկայացվել և քննարկվել են մի շարք հարցեր, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> • Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության վերաբերյալ հասարակական կարծիքի հարցման ներկայացում, • «Ընտանեկան բռնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշական աշխատանքային խմբի ծրագրերի ներկայացում, • «Ընտանեկան բռնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման մեխանիզմների վերաբերյալ քննարկում/մտքերի փոխանակում: • «Ընդդեմ գենդերային բռնության 2013 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության արձանագրային որոշման ներկայացում, • «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» ամենամյա հանրապետական քարոզարշավի մասին, • «Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց տրամադրվող ծառայությունների բարելավում» ծրագրի ներկայացում: <p>Հանձնաժողովի կողմից քննարկվել և հավանության է արժանացել ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ուղղակարական ծրագրով նախատեսված ընդդեմ գենդերային բռնության 2013 թվականի միջոցառումների տարեկան ծրագիրը, որը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Կառավարություն:</p> <p>Հանձնաժողովի կողմից ստեղծված աշխատանքային խմբի կողմից</p>	
------------------------------	---	--

		<p>իրականացվել են «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին», «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն ու լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի լրամշակման աշխատանքները: Վերոհիշյալ նախագծերը նախարարության կողմից սահմանված կարգով դրվել են շրջանառության մեջ և ներկայացվել են Հայաստանի Հանրապետության Կառավարություն:</p>	
<p>3.</p>	<p>Պետական ծառայողների որակավորման՝ նրանց գենդերային բռնության վերաբերյալ գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:</p>	<p>ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի N 567-Ա որոշմամբ հաստատված ծրագրով, որի շրջանակում 2012թ. «Գենդերային բռնություն» թեմայով վերապատրաստվել են քաղաքացիական ծառայողների բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների շուրջ 100 քաղաքացիական ծառայողներ:</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>
<p>4.</p>	<p>Գենդերային բռնության դեմ ուղղված հատուկ ակցիաների իրականացում:</p>	<p>Շարունակելով 2000-2011 թվականներին իրականացված «Ակտիվության 16-օրյակ ընդդեմ գենդերային բռնության» քարոզարշավների շարքը՝ 2012 թվականի նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 10-ը հանրապետությունում անցկացվել են «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» և «Սպիտակ ժապավեն» հանրապետական քարոզարշավները: Այն կոչված էր մեկ անգամ ևս հնչեցնելու գենդերային բռնության հիմնախնդրի</p>	<p>Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ</p>

		<p>կարևորությունը և ներգրավելու ավելի մեծ թվով մասնակիցների՝ այդ թվում պետական կառույցների, ՁԼՄ-ների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև հասարակության լայն շրջանակների:</p> <p>Յուրաքանչյուր տարի կանանց իրավունքների պաշտպանների հետ խորհրդակցությամբ մշակվում է քարոզարշավի համաշխարհային թեման և կարգախոսը: 2012 թվականի քարոզարշավի կարգախոսն էր <<Տանը խաղաղությունից, մինչև խաղաղություն աշխարհում. պայքարենք միլիտարիզմի դեմ և վերջ դնենք կանանց նկատմամբ բռնությանը>>: Քարոզարշավն ընդգրկում է հետևյալ օրերը.</p> <ul style="list-style-type: none"> • Նոյեմբերի 25 - Կանանց նկատմամբ բռնության վերացման ՄԱԿ-ի միջազգային օր, • Դեկտեմբերի 1- ՁԻԱՀ-ի համաշխարհային օր, • Դեկտեմբերի 2 – Ստրկության դեմ պայքարի միջազգային օր, • Դեկտեմբերի 6 – Մոնրեալի կոտորածի օր, • Դեկտեմբերի 10 – Մարդու իրավունքների միջազգային օր: <p>Ակցիայի շրջանակներում հանրապետությունում նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 10-ը իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ՝ հանդիպումներ, քննարկումներ, ցուցահանդեսներ, բեմադրություն, ռոք համերգ, սոցիալական տեսահոլովակների և ֆիլմերի ցուցադրում: Քարոզարշավի շրջանակներում մասնակիցներին տրամադրվել են համապատասխան տեղեկատվական և մեթոդական նյութեր, բուկլետներ, պլակատներ, տեսահոլովակներ և այլն:</p>	
ՀՀ կրթության և գիտության նախարարություն			
5.	Հանրակրթական դպրոցի տնօրենների, փոխտնօրենների և ուսուցիչների վերապատրաստման մո-	Գենդերային հիմնահարցերի վերաբերյալ թեմատիկ նյութերը ներառվել են տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների, ինչպես նաև «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչների վերապատրաստման մոդուլում: Մշակվել է «Գենդերային գիտելիքների հիմունքներ» թեմայով ներդիրը, որը	ՀՀ պետական բյուջե

	<p>դուլում գենդերային բռնությանը վերաբերող թեմաների ներառում:</p>	<p>կներառվի առարկայական ուսուցիչների, ինչպես նաև հանրակրթական դպրոցի տնօրենների և փոխտնօրենների վերապատրաստման մոդուլում: Միաժամանակ «Վստահություն» սոցիալական աշխատանքի և սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը առանձին թիրախային խմբերի համար կազմակերպել է ուսուցողական միջոցառումներ, որտեղ քննարկվել են նաև գենդերային բռնությանը վերաբերող թեմաներ: Այդ դասընթացներին մասնակցել են ընդհանուր թվով 56 մանկավարժներ, փոխտնօրեններ և տնօրեններ, ինչպես նաև 27 ապագա մանկավարժներ:</p>	
<p>6.</p>	<p>Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների և դասավանդողների վերապատրաստման դասընթացներում գենդերային բռնության բաղադրիչի ներառում:</p>	<p>Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումների շրջանակներում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ ուսումնական հաստատությունների 920 դասավանդողների և արտադրական ուսուցման վարպետների համար՝ 41 խմբով: Դասընթացի ծրագրում ներառվել են նաև թեմաներ ՄԿՈՒ ոլորտում առկա գենդերային խնդիրների վերաբերյալ: Գենդերային գիտելիքների իրազեկվածության բարձրացման նպատակով նախատեսվում է վերապատրաստման ծրագրում ներառել «Գենդերային գիտելիքների հիմունքներ» թեմայով ներդիրը:</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>
<p>7.</p>	<p>Ծնողների համար երեխաների խնամքի ու դաստիարակության վերաբերյալ ուսուցման կազմակերպում:</p>	<p>Շարունակվել է «Քայլ առ քայլ» ԲՀ-ի կողմից՝ Արարատի, Վայոց Ձորի, Կոտայքի, Տավուշի, Արագածոտնի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում թվով 10 կրթական հաստատություններում ծնողների շրջանում անցկացվող կարճատև ուսուցողական դասընթացներ՝ նպատակաուղղված ծնողների մանկավարժական ու առողջապահական գիտելիքների հարստացմանը: Ծնողները իրազեկվել են երեխաների խնամքի և դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ</p>	<p>Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ</p>

		պատասխանատվության կարևորության, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ: Դասընթացների ընթացքում նշված դասընթացներում ընդգրկվել է շուրջ 250 ծնող: Միաժամանակ «Վստահություն» սոցիալական աշխատանքի և սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի կողմից իրականացվել են կարճաժամկետ վերապատրաստումներ ծնողների համար՝ դաստիարակության խնդիրների վերաբերյալ: Նշված կազմակերպության կողմից անցկացվել են նաև հետազոտական աշխատանքներ՝ շուրջ 50 ծնողների և երեխաների շրջանում: Պատրաստվել են նաև ռադիոհաղորդումներ՝ ուղղված ներդաշնակ հասարակության ձևավորմանը:	
8.	Հանրակրթական դպրոցներում «Առողջ ապրելակերպ» դասընթացի իրականացում:	Հանրակրթական դպրոցի 8-11-րդ դասարաններում դասավանդվել է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվել է 14 դասաժամ: Դասընթացը նպաստել է սովորողների մոտ առողջ ապրելակերպի և ընտանեկան կյանքի նախապատրաստման հիմունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:	ՀՀ պետական բյուջե
ՀՀ Ոստիկանություն			
9.	Ոստիկանության աշխատակիցների իրազեկության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում:	Կազմակերպվել են ՀՀ «Ընտանեկան բռնություն թեմայով» վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել են ոստիկանության շուրջ 40 աշխատակիցներ:	Ֆինանսավորում չի պահանջվել

10.	Դպրոցականներին գենդերային բռնության վերաբերյալ գիտելիքներ փոխանցելու համար ծրագրային և ուսումնամեթոդական հիմքի ստեղծում:	Մշակվել է գենդերային բռնության ուսուցման մոդուլ, որը ներառվելու է հանրակրթական դպրոցների ծրագրերում	Ֆինանսավորում չի պահանջվել
« առողջապահության նախարարություն			
11.	Բռնության ենթարկված անձանց բուժօգնության կազմակերպման ուղեցույցների ներդրում և աջակցության գործուն մեխանիզմների մշակում:	Միավորված ազգերի բնակչության հիմնադրամի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի» աջակցությամբ և «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի մասնակցությամբ մշակվել է «Ընդդեմ գենդերային բռնության» ձեռնարկը՝ բուժաշխատողների համար: Այն ներառում է բռնության ենթարկված անձանց առողջապահական ծառայությունների տրամադրման նվազագույն չափորոշիչները: Ձեռնարկը տրամադրվել է հանրապետության բոլոր կանանց կոնսուլտացիաների բժիշկներին:	Ֆինանսավորում չի պահանջվել
12.	Բուժհաստատությունների կողմից գենդերային բռնության դեպքերի կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում:	«Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում մշակվել են սեռական բռնության ենթարկված անձանց առողջության վրա բռնության հետևանքների կանխարգելմանն ուղղված միջոցառումների (մասնավորապես՝ անցանկալի հղիության, սեռավարակների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման նպատակով դեղամիջոցների ստացման անհրաժեշտության մասին) տեղեկատվական թերթիկներ: Հիշյալ տեղեկատվական թերթիկները տրամադրվել են հանրապետության առողջապահական հիմնարկներին:	Ֆինանսավորում չի պահանջվել
« Կոտայքի մարզպետարան			
13.	Մարզի մշակութային հաստատությունների տնօրենների գեն-	Չարենցավանի Արամ Խաչատրյանի անվան դպրոցում մարզի արվեստի և երաժշտական դպրոցների տնօրենների աշխատանքային խորհրդակցության ընթացքում (16.05.2012թ), կազմակերպվել է գրույց-բանավեճ	Ֆինանսավորում չի պահանջվել

	<p>դերային բռնության վերաբերյալ գիտելիքների հաղորդման և գենդերային զգայունության բարձրացմանն ուղղված միջոցառման իրականացում <<Ժամանակակից հասարակության գենդերային մշակույթի ձևավորման և գենդերային բռնության հիմնախնդիրները>> թեմայով:</p>	<p><<Ժամանակակից հասարակության գենդերային մշակույթի ձևավորման և գենդերային բռնության հիմնախնդիրները>> թեմայով: Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի մասնագետների հետ որպես համագործակցող կողմ մասնակցել են աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի աշխատողները: Ըստ բանախոսների ժամանակակից հասարակության գենդերային մշակույթի ձևավորումը սկսվում է ընտանիքում, հետևաբար, պետք է լուրջ ուշադրություն դարձնել գենդերային դաստիարակությանը: Քննարկմանը մասնակից մշակութային հաստատությունների տնօրենները համապատասխան տեսական գիտելիքներ են ստացել և խորհրդատվություն՝ բարդ հոգեբանական իրավիճակներում կողմնորոշվելու ուղղությամբ:</p>	
<p>14.</p>	<p>Մարզի լրագրողների որակավորման բարձրացման, բնակչության շրջանում գենդերային հավասարության և գենդերային բռնության հիմնախնդիրների գիտելիքների հաղորդմանն և գենդերային զգայունության բարձրացմանն ուղղված լուսաբանման աշ-</p>	<p>Կոտայքի մարզային երիտասարդական կենտրոնում կազմակերպվել է սեմինար պարապմունք և դասընթացների ընթացքում ներկայացվել են գենդերային բռնության իրազեկության բարձրացումն ապահովող դրույթները՝ արդյունքում ապահովվել է մասնակիցների տեղեկացվածությունը և տրամադրվել են անհրաժեշտ պարզաբանումներ խնդրի վերաբերյալ:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>

	խատանքների իրականացում:		
15.	Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրի իրագրելում:	Դպրոցների տնօրենների խորհրդակցության ժամանակ ներկայացվել են ազգային ծրագրի նպատակները և հիմնական ուղղությունները:	Ֆինանսավորում չի պահանջվել
16.	Մարզի մշակութային հաստատությունների աշխատողների գենդերային բռնության վերաբերյալ գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Ձեկուցում՝ «Հայ ազգային մտակերտվածքը, ընդունված գենդերային կարծրատիպերը և գենդերային բռնության հանդեպ հասարակության վերաբերմունքը, նոր արժեքների ներթափանցման և գլոբալացման պայմաններում» թեմայով մարզի մշակութային հաստատությունների աշխատողների համար:	Ֆինանսավորում չի պահանջվել
17.	Համայնքներում գենդերային բռնության հիմնախնդրի իրագրելման բարձրացմանն ուղղված հատուկ ակցիաների իրականացում:	«Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավի շրջանակներում հանդիպումներ Հրազդան (27.11.2012թ.), Աբովյան (04.12.2012թ.), Չարենցավան (06.12.2012թ.) համայնքներում:	Ֆինանսավորում չի պահանջվել
18.	Հանրակրթական դպրոցների աշակերտների և ծնողների շրջանում գենդերային բռնության վերաբերյալ տեղեկատ-	Անցկացվել են քննարկումներ ներընտանեկան բռնության հիմնախնդիրների վերաբերյալ:	Ֆինանսավորում չի պահանջվել

	վրայան տարածում:		
19.	<<Կինը և 21-րդ դարի մարտահրավերները, գենդերային բռնությունը որպես հիմնական խոչընդոտ կանանց հասարակական ակտիվության դրսևորման համար>> թեմայով կլոր սեղան:	<<Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա >> ՀԿ-ի նախաձեռնությամբ (04.05.2012թ) անցկացվել է կլոր սեղան : Գենդերային կարծրատիպերի հաղթահարում, ներընտանեկան բռնության հիմնախնդրի բարձրաձայնում, երևույթի նկատմամբ հասարակական գիտակցության փոփոխության ակնկալում:	Ֆինանսավորում չի պահանջվել
20.	<<Ներընտանեկան բռնության հիմնախնդիրը և առանձնահատկությունները>> քննարկումներ՝ ըստ մարզում հայտնաբերված դեպքերի:	Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նիստում /18.10.2012թ./ ներընտանեկան բռնության հիմնախնդրի բարձրաձայնում, կանխարգելման աշխատանքների իրականացում:	Ֆինանսավորում չի պահանջվել
<< Արարատի մարզպետարան			
21.	Ազգային ծրագրի մասին տեղեկատվության տարածում:	Կապ է հաստատվել տեղի ՀԿ-ների հետ՝ իրենց գործառույթներին առաքելությանը, իրականացված աշխատանքներին ծանոթանալու և համագործակցելու նպատակով:	Ֆինանսավորում չի պահանջվել
22.	Համագործակցություն ոստիկանության հետ՝ բռնության դեպքերի բացահայտման համար:	Մարզպետարանի մանագետները, համագործակցելով ոստիկանության տեղամասային տեսուչների հետ, պարբերաբար այցելել են ոիսկային ընտանիքներ, աջակցել նրանց, անհրաժեշտության դեպքում ուղղորդել համապատասխան կառույցներ /ՀՕՖ-ի կենտրոն, Կանանց իրավունքների կենտրոն/ տեղում օգնությունը կազմակերպելու համար:	Ֆինանսավորում չի պահանջվել

23.	Գենդերային բռնության դեմ պայքարին ուղղված հատուկ ակցիաների իրականացում:	Մարզը մասնակցել է «Գենդերային բռնության դեմ պայքարի 16-օրյակ» քարոզարշավին: Մասնակիցները այցելել են մարզի 10 հիմնարկներ /դպրոցներ, բուժ.հաստատություններ և այլ կառույցներ/, քննարկել են առկա խնդիրները, խոսել են գենդերային կարծրատիպերի և դրանց հաղթահարման ուղիների մասին:	Ֆինանսավորում չի պահանջվել
24.	Մարզի հանրակրթական դպրոցներում «Առողջ ապրելակերպ» դասընթացի մոնիտորինգի իրականացում:	Աշխատանքային խմբի մանկավարժները և բժիշկները այցելել են մարզի բոլոր դպրոցները և զրուցել այն դասարանների աշակերտների հետ, որտեղ դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» առարկան: Արդյունքները ամփոփվել են:	Ֆինանսավորում չի պահանջվել
25.	Մարզի 9 համայնքներում կանանց հետ հանդիպումների կազմակերպում:	Կանանց իրավունքների կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել են շրջիկ կոնֆերանսներ՝ կենտրոնի աշխատանքներին բնակչությանը ծանոթացնելու նպատակով:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
26.	Գենդերային հիմնահարցերի ուսումնասիրություն, ծրագրերի մշակում և դրանց կատարման ապահովում:	Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման նպատակով կազմակերպվել են սեմինարներ, կլոր սեղաններ:	Ֆինանսավորում չի պահանջվել
«Վայոց ձորի մարզպետարան»			
27.	«Կառավարության «Ընդդեմ գենդերային բռնության» ազգային ծրագրի քննարկում և մարզպետարանին առաջա-	Ծրագիրը քննարկվել է մարզային հնաձևաժողովում 2012թ. փետրվարի 8-ին / արձանագրություն N°1, կետ 2/ և մարզխորհրդում, մասնակցել են համայնքների ղեկավարներ և հանրակրթական դպրոցների տնօրեններ: Համայնքների, կրթական և առողջապահական հիմնարկների ղեկավարներին առաջարկվել է սեղմ ժամկետում մարզպետարանի համապատասխան բաժին ներկայացնել տեղեկատվություն բռնության	Ֆինանսավորում չի պահանջվել

	դրվող խնդիրների կատարման վերահսկում:	դեպքերի մասին; իրավաբանական բաժնին հանձնարարվել է տուժողներին տրամադրել իրավաբանական խորհրդատվություն: Մարզային հանձնաժողովին հանձնարարվել է քննարկել գենդերային բնության յուրաքանչյուր դեպքը և վեր հանել պատճառները :	
28.	Մարզում գենդերային բնության ենթարկված անձանց բացահայտում և արձագանքում:	2012թ. մարզում բացահայտվել է գենդերային բնության 6 դեպք, կազմակերպվել է քննարկում ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ, տրվել են համապատասխան լուծումներ: Բուժման է ուղարկվել 2 հոգի, դատական գործ է հարուցվել 1-ի նկատմամբ, ոստիկանական հսկողություն է սահմանվել 3 ընտանիքի նկատմամբ:	Ֆինանսավորում չի պահանջվել
29.	Մամուլի միջոցով գենդերային բնության խնդիրների լուսաբանում:	Մարզային «Վարդաձոր» թերթում տպագրվել են «Կառավարության «Ընդդեմ գենդերային բնության» 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի առանձին հատվածներ՝ մեկնաբանություններով:	Ֆինանսավորում չի պահանջվել
30.	Մարզպետարանում գենդերային բնության ենթարկված անձանց համար խորհրդատվական կենտրոնի ստեղծում:	Ստեղծվել է կենտրոն, որում ընդգրկվել է 2 իրավաբան, 1 հոգեբան, 1 մանկավարժ և ՀԿ-ի ներկայացուցիչ: 2012թ. խորհրդատվական կենտրոնին օգնության խնդրանքով դիմել է մարզի 13 բնակիչ:	Ֆինանսավորում չի պահանջվել
«Արմավիրի մարզպետարան»			
31.	Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում/այդ թվում՝ հա-	Արմավիրի, Վաղարշապատի, և Բաղրամյանի տարածաշրջանների շուրջ 25 համայնքներում ՀԿ-ների հետ համատեղ կազմակերպվել են «Ընդդեմ գենդերային բնության» խորագրով սեմինարներ և կլոր սեղաններ: Դրանք նպաստել են մարզում գենդերային բնության դեպքերի նվազեցմանը: Կանայք ավելի ակտիվ ներգրավվել են մարզի համայնքային աշխատանքներում, բարձրացել է նրանց դերը կյանքի տարբեր ոլորտներում:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ

	մայնքների ղեկավարների աշխատակազմ/ գենդերային բռնության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում:		
32.	Գենդերային բռնության մասին գիտելիքների հաղորդում հանրակրթական դպրոցի ուսուցիչներին:	Թվով 100 դպրոցներում կազմակերպվել են սեմինարներ, կինոդիտումներ /գենդերային բռնության <<Մանրապատումներ>>, <<Թիթեռ>> տեսաֆիլմեր/, տարածվել են նյութեր, մարզի 12 դպրոցներում կազմակերպվել են երեխաների կողմից բեմադրված ներկայացումներ, ինտեռակտիվ քննարկումներ:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
33.	ԶԼՄ-ներում գենդերային բռնության մասին ինֆորմացիոն նյութերի հրապարակում:	Մարզային 3 հեռուստաընկերություններով և լրատվական այլ միջոցներով ներկայացվել են ընդդեմ գենդերային բռնության տեսանյութեր, նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածում հրապարակվել են ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ քարոզարշավին նվիրված տեսանյութեր:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
<< Լոռու մարզպետարան			
34.	Միջոցառումներ, ուղղված հանրության կողմից գենդերային բռնության երևույթի ընկալմանը և դրա դեմ պայքարին:	Կազմակերպվել են “Ընդդեմ գենդերային բռնության” խորագրով 5 հանդիպումներ մարզի բոլոր քաղաքներում և խոշոր համայքներում: Ներկայացվել են գենդերային բռնության տեսակները, ոլորտի ազգային, միջազգային փաստաթղթերը, քննարկվել են պայքարի առանձնահատկությունները: Հանդիպումներին մասնակցել են թվով 120 մարդ:	Ֆինանսավորում չի պահանջվել
35.	Գենդերային բռնութ-	Իրականացվել է <<Ընդդեմ գենդերային բռնության>> 16-օրյակ մարզի 8	Ֆինանսա-

	յան դեմ պայքարին ուղղված հատուկ ակցիաների իրականացում:	քաղաքներում: Մասնակցել են տարբեր ՀԿ-ների ներկայացուցիչներ, համայնքապետարանների աշխատակիցներ:	վորում չի պահանջվել
36.	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թրաֆիքինգի կանխարգելում:	Մարզպետարանում եւ մարզի տարածքային 5 կենտրոններում կազմակերպվել են սեմինարներ, հանդիպումներ, որոնց նպատակն է եղել հանրությանը իրազեկել նշված երեւոյթների մասին: Մասնակցել են թվով 100 մարդ:	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Տավուշի մարզպետարան			
37.	Մարզի հանրակրթական դպրոցների և մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների համար “Գենդերային բռնություն” թեմայով դասուսուցումների կազմակերպում:	Իջևանի տարածաշրջանի թիվ 1 դպրոցում 2012թ. ապրիլի 2-ին 25 աշակերտ, թիվ 4 դպրոցում ապրիլի 3-ին 25 աշակերտ, թիվ 5 դպրոցում ապրիլի 4-ին 8-9-րդ դասարաններում 25-ական աշակերտ, ընդամենը 100 աշակերտ: Նոյեմբերյան քաղաքի թիվ 1 դպրոցում մայիսի 14-ին, 15-ին, 16-ին, 17-ին և 18-ին 8-12-րդ դասարանների թվով 100 աշակերտ:	Ֆինանսավորում չի պահանջվել
38.	Ծնողների համար <<Երեխաների խնամքը և դաստիարակությունը>> թեմայով սեմինար պարապմունքների անցկացում:	Մարզի 6 համայնքներու ծնողների համար կազմակերպվել են կարճատև ուսուցողական դասընթացներ՝ երեխաների խնամքի և դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ:	Ֆինանսավորում չի պահանջվել
39.	Մարզի հանրակրթական դպրոցներ-	Հանրակրթական դպրոցներում ֆիզիկական կուլտուրա առարկայից 14 դասաժամ հատկացված է «Առողջ ապրելակերպ» թեմային, սակայն	Ֆինանսավորում չի պահանջվել

	րում «Առողջ ապրելակերպ» թեմայով դասընթացներ:	ուսումնասիրություններից պարզվել է, որ թեման կարիք ունի լրացուցիչ քննարկման և աշակերտներին ավելի խորը գիտելիքներ տրամադրելու նպատակով Դիլիջան քաղաքի 2-րդ և 6-րդ դպրոցներում անց են կացվել <<Առողջ ապրելակերպ և ընտանեկան կյանքին նախապատրաստվելու հիմունքներ>> թեմայով լրացուցիչ դասընթացներ:	հանջվել
40.	Հանցագործությունների կանխարգելման պետական հայեցակարգի պահանջների համաձայն մարզում անչափահասների շրջանում իրազեկության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում:	Կազմակերպվել են գենդերային բռնության վերաբերյալ դասընթացներ Իջևանի տարածաշրջանի 3 հանրակրթական դպրոցների անչափահասների շրջանում:	Ֆինանսավորում չի պահանջվել
<< Սյունիքի մարզպետարան			
41.	Մարզային ենթակայության կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների համար գենդերային բռնության ձևերի մասին	Մարզպետարանում կազմակերպվել է հանդիպում-քննարկում հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ և կազմվել է ժամանակացույց նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 10 ընկած ժամանակահատվածում միջոցառումներ կազմակերպելու համար: Նշված ժամանակահատվածում Կանանց իրավունքների կենտրոն ՀԿ-ի Կապանի մասնաճյուղի Թեժ գծի պատասխանատուները կազմակերպել են կինոդիտում-քննարկում, որին մասնակցել են գենդերային հարցերով մարզային հանձնաժողովի անդամները, բանավեճ մարզային գրադարանում, կլոր սեղան Կապանի կանանց ռեսուրս կենտրոն հասարակական կազմակերպության գրասենյակում:	Ֆինանսավորում չի պահանջվել

	դասընթացներ:		
42.	Բնակչության տարբեր խմբերի, այդ թվում՝ երիտասարդների համար, գենդերային բռնության երևույթի վերաբերյալ դասուսուցումներ:	Մարզի 10 համայնքներում երիտասարդների համար դասընթացներ են կազմակերպվել «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի աջակցությամբ:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
43.	Հատուկ ակցիաներ «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16- օրյակ» հանրապետական քարոզարշավի շրջանակներում:	Տեղական հեռուստաթերով կազմակերպվել է բանավեճ, որին մասնակցել են կանանց հարցերով զբաղվող ՀԿ-ներ և մարզպետարանի աշխատակիցներ: Մարզի 10 դպրոցներում կամակերպվել են տեսաֆիլմեր և տեսահոլովակներ դիտումներ:	ֆինանսավորում չի պահանջվել
44.	Գենդերային բռնությունը տղամարդկանց տեսանկյունից:	Մարզային գրադարանում կազմակերպվել է թեմատիկ քննարկում:	ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Շիրակի մարզպետարան			
45.	«Ընդդեմ գենդերային բռնության» ազգային ծրագրի միջոցառումների մասին իրազեկու. մարզային ենթակայության	Մարզի 5 համայնքներում կազմակերպվել են «Գենդերային բռնության հիմնախնդիրները» թեմայով դասընթացներ:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ

	կազմակերպություններում, ՏԻՄ-ում (այդ թվում համայնք-ների ղեկավարների, աշխատակազմերում):		
46.	Գենդերային բռնության դեմ ուղղված հատուկ ակցիաների իրականացում:	1. Կազմակերպվել է Գյումրի-Երեւան քայլարշավ, որին մասնակցել է մարզի 6 համայնք: Իրականացվել են <<Գենդերային հիմքով բռնություն>> թեմայով զրույցներ գյուղի բնակչության հետ: 2. Մասնակցություն «Ընդդեմ գենդերային բռնության» 16 օրյա քարոզարշավին:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
47.	Գենդերային բռնությունը արվեստի լեզվով:	Կազմակերպվել են «Թրաֆիքինգ», «Ընտանեկան բռնություն» թեմաներով երեխաների նկարների ցուցահանդեսներ:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
48.	Ընտանեկան բռնության և թրաֆիքինգի ենթարկված կանանց ուղղորդում, ապաստարանի տրամադրում:	Բռնության ենթարկված 6 կնոջ՝ իրենց 8 երեխաների հետ ապաստարան է տրամադրվել, յուրաքանչյուրի համար իրականացվել են հոգեբանական վերականգնողական աշխատանքներ <<Աջակից>> ՀԿ-ի և գենդերային հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի կողմից:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
<< Գեղարքունիքի մարզպետարան			
49.	Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային բռնության քաղաքա-	Մարզի 13 համայնքներում կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ, տրամադրվել են տեղեկատվական նյութեր:	Ֆինանսավորում չի պահանջվել

	կանության ներկայացում:		
50.	Բնակչության տարբեր խմբերի, այդ թվում երիտասարդների համար, <<Գենդերային բռնություն>> թեմայով դասընթացների կազմակերպում:	Կազմակերպվել է 6 դասընթաց, որին մասնակցել են շուրջ 140 մարդ, դասընթացների մասին տեղեկատվությունը տպագրվել է մարզային թերթում:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
51.	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների միջոցով աշակերտների և ծնողների շրջանում գենդերային բռնության վերաբերյալ տեղեկատվության տարածում:	Մարզի 13 դպրոցներում կազմակերպվել են 4 բանավեճեր, 3 սեմինար և բաց դասեր:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
52.	Հատուկ ակցիաներ <<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> հանրապետական քարոզարշավի շրջանակներում:	Կազմակերպվել են քննարկումներ գենդերային բռնության թեմաներով, տեսաֆիլմերի և տեսահոլովակների դիտումներ մարզի 20 դպրոցներում:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
53.	Գենդերային բռնության դեմ պայքարի	Մշակվել և ՋԼՄ-ներում հրապարակվել են գենդերային բռնության դեմ պայքարի մասին տեղեկատվական նյութեր:	Ֆինանսավորում չի պա-

	լուսաբանում:		հանջվել
54.	Գենդերային բռնության ենթարկված անձանց ուղղորդման վերաբերյալ առաջարկությունների մշակում:	Կազմակերպվել են քննարկումներ առողջապահության և ոստիկանության ոլորտի մասնագետների հետ՝ գենդերային բռնության ենթարկված անձանց մասին տեղեկատվության հավաքագրման և ուղղորդման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու մասին:	Ֆինանսավորում չի պահանջվել
55.	<<Ընդդեմ գենդերային բռնության>> Ազգային ծրագրի իրականացման ընթացքի լուսաբանման աշխատանքների իրականացում:	Մարզում կանանց ոլորտում գործող ՀԿ-ների հետ քննարկվել են իրենց կողմից իրականացվող ծրագրերը և համագործակցության հնարավորությունները:	Ֆինանսավորում չի պահանջվել
56.	Գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում:	<< ոստիկանության մարզային բաժանմունքների հետ համատեղ իրականացվել են լուսաբանման աշխատանքներ:	Ֆինանսավորում չի պահանջվել
57.	Գենդերային բռնության դեմ ուղղված հատուկ ակցիաների իրականացում:	Իրականացվել է <<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> քարոզարշավ մարզային կառույցներ մասնակցությամբ: Կազմակերպվել են հանդիպումներ մարզի 15 հաստատություններում /դպրոցներ, բուժ.հիմնարկներ և այլ կառույցներ/, ուղղված գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը:	Ֆինանսավորում չի պահանջվել
58.	Մարզի հանրակրթական դպրոցներում <<Առողջ ապրելակերպ>> թեմայով	Կազմակերպվել են հանդիպումներ մարզի դպրոցներում, այն դասարաններում, որտեղ դասավանդվում է <<Առողջ ապրելակերպ>> առարկան, անց են կացվել զրույցներ, որի արդյունքում ամփոփվել և քննարկվել են արդյունքները:	Ֆինանսավորում չի պահանջվել

	դասընթացի մոնիթորինգ:		
59.	Գենդերային բնույթյան երևույթի և դրա դեմ պայքարի կազմակերպման աշխատանքների լուսաբանում:	Մարզի 13 համայնքներում <<Կանանց իրավունքների կենտրոն>> ՀԿ-ի հետ համատեղ կկազմակերպվեն շրջիկ կոնֆերանսներ կենտրոնի աշխատանքները իրազեկելու նպատակով:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
<< Արագածոտնի մարզպետարան			
60.	Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային բնույթյան դեմ պայքարի պետական քաղաքականության լուսաբանում	<<Կանանց իրավունքների կենտրոն>> ՀԿ-ի հետ համագործակցությամբ մարզի հանրակրթական 10 դպրոցներում, 7 համայնքներում կազմակերպվել են քննարկումներ, հանդիպումներ, որին ներկայացվել է գենդերային բնույթյան դեմ պայքարի պետական քաղաքականությունը: Մասնակիցներին բաժանվել են տեղեկատվական նյութեր, ցուցադրվել է ֆիլմ: Մարզի 10 համայնքներից պետական, համայնքային կառույցների 12 աշխատակիցներ և հասարակական կազմակերպությունների 3 ներկայացուցիչներ մասնակցել են „Ընտանեկան բնություն” թեմայով հանրապետական կոնֆերանսին:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
61.	Բնակչության տարբեր խմբերի, այդ թվում երիտասարդների համար <<Գենդերային բնություն>> թեմայով ուսուցում:	Մարզային հանձնաժողովի անդամների կողմից կազմակերպվել է դասընթաց <<Գենդերային բնություն>> թեմայով, որին մասնակցել են չաշխատող, չսովորող 20-30 տարեկան 15 երիտասարդ, ուստիկանությունում պրոֆիլակտիկ հաշվառման վերցված 5 անչափահաս, նրանց ծնողները և զբաղվածության գործակալությունում գրանցված 10 անձիք:	ֆինանսավորում չի պահանջվել
62	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների միջոցով աշա-	Վերապատրաստված մանկավարժների միջոցով մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների և նրանց ծնողների համար կազմակերպվել են գենդերային բնույթյան հիմնահարցերին վերաբերող 5 բաց դասեր: <<Իմ	ֆինանսավորում չի պահանջվել

	կերտների և նրանց ծնողների շրջանում գենդերային բռնության մասին գիտելիքների տարածում, կարծրատիպերի հաղթահարում:	միջավայրը՝ առանց բռնության>> կարգախոսով միջոցառում է կազմակերպվել Աշտարակի Վ.Պետրոսյանի անվան հիմն. դպրոցում:	
63.	<<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> հանրապետական քարոզարշավի շրջանակներում ակցիաների իրականացում:	Արագածոտնի մարզի 6 համայնքներում կազմակերպվել է <<Ընդդեմ գենդերային բռնության>> կարգախոսով քարոզարշավ: <<Կանանց ռեսուրս-կենտրոն>> ՀԿ-ն կազմակերպել է քայլարշավ՝ մարզի Մաստարա համայնքից մինչև Աշտարակ: Քարոզարշավին մասնակցել են նաև եզդիաբնակ մի համայնքի՝ Շամիրամի բնակիչները: Բաժանվել են շուրջ 700 օրինակ տեղեկատվական նյութեր, ցուցադրվել է ֆիլմ:	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ
64.	ԶԼՄ-ներում գենդերային բռնության հիմնախնդիրների մասին տեղեկատվական նյութերի հրապարակում:	Քարոզարշավի շրջանակներում կազմակերպված միջոցառումների մասին, ինչպես նաև գենդերային բռնությանը վերաբերող 3 նյութի հրապարակում մարզային <<Կանթեղ>> և <<Գյուղխորհրդատվություն>> թերթերում: Նյութերի տեղադրում մարզպետարանի կայքում:	Ֆինանսավորում չի պահանջվել
65.	Բուժհիմնարկների և ոստիկանության մասնագետների համատեղ քննարկում,	Աշտարակ քաղաքում ոստիկանության և բուժհիմնարկների աշխատակիցները համատեղ քննարկել են համագործակցության, գենդերային բռնության ենթարկված 5 անձանց ուղղորդման խնդիրները: Ընտանեկան բռնության ենթարկված 20 կանանց <<Լայթ հաուս>> միջազգային հասարակական կազմակերպությունը տրամադրել է մանկական	Ֆինանսավորում չի պահանջվել

	<p>նվիրված գենդերային բռնության ենթարկված անձանց մասին տեղեկատվության հավաքագրմանը և ուղղորդմանը:</p>	<p>հազուստ :</p>	
Երևանի քաղաքապետարան			
<p>66.</p>	<p>Գենդերային բռնության առանձնահատկությունների, «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկում, բռնության կանխարգելման և զոհերի ուղղորդման ընթացակարգերի հստակեցում:</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության և քաղաքապետին կից գենդերային հանձնաժողովի կողմից Երևան քաղաքի ոստիկանության վարչության տարածքային բաժինների համայնքային ոստիկանության անչափահասների գործերով տեսուչների, վարչական շրջանների գենդերային հարցերով զբաղվող աշխատողների համար կազմակերպվել է սեմինար:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
<p>67.</p>	<p>Սովորողների համար գենդերային բռնության կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված միջոցառումներ:</p>	<p>Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթական վարչության կողմից հանրակրթական դպրոցներում և մասնագիտական ուսումնական հաստատություններում կազմակերպվել են զրույցներ՝ ա. «Գենդերային բռնությունը և դրա դեմ պայքարի կարևորությունը»: բ. «Գենդերային բռնության տեսակները. հոգեբանականից մինչև ֆիզիկական ազդեցություն»: գ. «Պետության խնդիրները բռնության դեմ պայքարի համատեքստում» դ. «Գենդերը և գենդերային կարծրատիպեր»</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>

		ե. «Գենդերային դերերի բաշխում» թեմաներով:	
68.	Առաջնային բուժօգնություն իրականացնող բուժհաստատությունների տնօրենների շրջանում կանանց նկատմամբ խտրականության վերացմանն ուղղված խնդիրների լուսաբանման աշխատանքերի իրականացմանն ուղղված միջոցառումներ:	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության կողմից առողջապահության վարչության ենթակայության առողջապահական ընկերությունների բժիշկ-մասնագետների համար կանանց նկատմամբ գենդերային խտրականության վերացմանն ուղղված սեմինար-պարապմունքների կազմակերպում :	Ֆինանսավորում չի պահանջվել
69.	Բուժ.հաստատությունների,կրթական և սոցիալական ծառայություն տրամադրող հաստատությունների, ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների կողմից աջակցություն տրամադրող կառույցների գործունեության լուսաբանում:	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության կողմից առողջապահության վարչության ենթակայության առողջապահական ընկերությունների բժիշկ-մասնագետների համար բռնության երևույթների հանդեպ անհանդուրժողականության միջավայրի ձևաորման նպատակով իրականացվել են սեմինարներ՝«Ընդդեմ գենդերային բռնության» թեմայով :	Ֆինանսավորում չի պահանջվել
70.	Գենդերային	ա/Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և	Երևանի

	բռնության կանխարգելում	<p>երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքներին և անհատներին տրամադրել է սոցիալական աջակցություն /15 կանանց տրամադրվել է սնունդ և հագուստ, 1 ընտանիք ստացել է դրամական օգնություն/, հոգեբանական, իրավաբանական խորհրդատվություն, բռնության ենթարկված կանայք տեղեկացվել են գործող ապաստարանների մասին:</p> <p>բ/ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական վարչության և հայ-դանիական «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվել են աշխատանքներ ընտանեկան բռնությունների արդյունքում մայրաքաղաքի փողոցներում հայտնված քաղաքացիներին ապաստան տրամադրելու ուղղությամբ: Վարդաշեն 9-րդ փողոցի հ.70 շենքում տեղավորվել են շուրջ 141 անօթևաններ՝ որոնցից 36-ը կին, 105-ը՝ տղամարդ/բոլորին տրամադրվել են սոցիալական և հոգեբանական ծառայություններ/:</p>	բյուջե շուրջ 20 մլն.դրամ
71.	<<Գենդերային բռնության կանխարգելում>>	<p>Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը խնամակալություն և հոգաբարձության հանձնաժողովների, ինչպես նաև գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբի համար կազմակերպել է քննարկումների, կլոր սեղանների շարք:</p>	Ֆինանսավորում չի պահանջվել
72.	Բռնության հանդեպ անհանդուրժողականության ձևավորման և գենդերային կարծրատիպերի վերացմանն ուղղված միջոցառումներ:	<p>Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի, Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի, Կանանց աջակցման կենտրոնի, «Լայթ Հաուս», «Սեյվ դը Չիլդրեն», «Մարդու իրավունքների միջազգային հանրություն» կազմակերպությունների հետ համատեղ սեռի հատկանիշով բռնության ենթարկված անձանց տրամադրվել է սոցիալական աջակցություն:</p>	Ֆինանսավորում չի պահանջվել